

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

«ՄՈՒՐՃ»-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1894 թվականի համար (VI-րդ տարեշրջան) բացում է ներկա համարի լուս տեղեկով ինչպէս, ամեն տարի՝ նաև ալժամ ուղարկում ենք մեր բոլոր բաժանորդներին տպագրւած դրամական ծրարներ, խնդրում ենք բոլոր նոցա, որոնք համակրանք ունեն դէպի «Մուրճ» և աշխատեն իրանց շրջաններում՝ «Մուրճ»-ը աւելի ու աւելի լայն խաւերում տարածելու համար:

«ՄՈՒՐՃ»-Ի ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԵԱՆ իրաւունքը 1894 թվականի լուսւարին պ. ֆ. Վարդապետեանից վերստին անցնում է ամսագրիս հիմնադիր և խմբագիր պ. Ա. Արասխանեանցին, ինչպէս ալդ կար 1889—1891 թվականներին:

«ՄՇԱԿԻ» ՄԻ ԼՈՒՐԸ: «Մշակ» Լրագիրը միւս տեղական լրագիրների ճիշդ և պատշաճաւոր կերպով հաղորդած լուրը՝ թէ «Մուրճ»-ի հրատարակութիւնը 1894 թվին պ. Վարդապետեանցից անցնում է ամսագրիս խմբագիր պ. Ա. Արասխանեանցին, — «Մշակը» ասում ենք, ալդ լուրը ալսպէս է հրատարակել իւր № 2-ում:

«Տեղական լրագիրները հաղորդում են, որ «Մուրճ» ամսագրի հրատարակիչ պ. ֆ. Վարդապետեան հրաժարել է հրատարակչութեան իրաւունքից»:

Գիտէ՞ք ընթերցող, ինչ են նշանակում ալս խօսքերը թէ «հրատարակիչը հրաժարել է հրատարակչութեան իրաւունքից?» Ալդ նշանակում է թէ հրատարակչի հրատարակած թերթը դադարել է հրատարակել, որովհետև օրէնքով ամեն թերթ պէտք է կառավարութիւնից ճանաչւած հրատարակիչ ունենալ: «Մշակ»-ը, ուրեմն, չալտարարում է, իւր թէ ուրիշ լրագիրների խօսքերով, թէ «Մուրճ»ը դադարել է հրատարակել:

Շնորհաւորում ենք «Մշակ»-ի խմբագրութեանը, որ ալդքան շնորհքով և տաղանդով լուրեր խմբագրել գիտէ:

Թէ ինչու «Մշակ»-ը մի ալդքան պարզ լուր առնալոյ երկդիմի ձևով է հրատարակել — ալդ իրա բանն է, բալց

պատճառանշուով ինչ հարկադրում է «Մշակ»-ի խմբագրութեան խնդիրքը՝ տպել «Մուրճ»-ում նորա բաժանորդական լաւտարարութիւնը՝ գէթ ալս ամիս անկատար թողնել, սպասելով, որ «Մշակ»-ը իւր անտակտութիւնը խոստովանի:

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԸ** անակընկալ պատճառներով չկարողացանք հրատարակել:

**ՍԵՆԿԵՆԻ ՉԻ** «Առանց Դաւանանքի» վէպի շարունակութիւնը չկարողացանք ալս անգամ զետեղել, իւր ժամանակին ստացած չլինելու պատճառով: Վերապահեցինք գալ 11-րդ համարին, Վէպի տպագրութիւնը կը վերջանալ զեկտեմբերի համարում:

**ԷՋԻՄԻԱՆՆԻՑ** հետեւեալ լուրերը հասան, ձեմարանի երգեցողութեան ուսուցիչ պ. Կարա-Մուրզա հրաժարեցրած է իւր պաշտօնից: Սրբազան Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը հրաժարական տւեց ձեմարանի տեսչութեան պաշտօնից, որ և ընդունեց: ձեմարանի տեսչի պաշտօնով նշանակւած է Սարգիս եպ. Տէր-Գասպարեան, երգեցողութեան ուսուցիչ նշանակւած է Սողոմոն սարգաւազը:

Խորէն ծ. վ. Ստեփանէն նշանակւած է բնմրասացութեան ուսուցիչ:

**ԷՋԻՄԻԱՆՆԻ ՁԵՄԱՐԱՆԻ ՏԵՍՈՒՉ** նշանակւած է Արիստակէս եպ. Սեդրակեանի տեղ՝ Սարգիս եպիսկ. Տէր-Գասպարեան, որը առաջինի նախորդէր Մակար Կաթողիկոսի կեանքի վերջին և երեմիա եպիսկոպոսի տեղակալութեան առաջին ամիսներում:

**ՄԵՐ ԽԱՒԱՐԱՄԻՑ ԲԱՆԱԿԻ ԹԵՐԹԵՐԸ** ներկալ հոկտեմբեր ամսում հրատարակեցին իրանց թղթակիցներից ստացած quasi լուրեր, որոնց համաձայն իբր թէ Նորին Վեհափառութիւնը Էջմիածնի բոլոր հաստատութիւնները մէջ փոփոխութիւններ է մտցրել: Եւ դեռ մինչ օրս էլ, հոկտեմբերի վերջը, այդ թերթերի ընթերցողների երեակալութեան մէջ Սահակ վարդապետ Բաղդասարեանը վեհափառի կոնդակագիրն է, պ. Սեդրակ Մանգինեանը՝ ձեմարանի տեսչի օգնական է, Նահապետ արեղալ՝ Նահապետեանը՝ վանքի ընդհանուր կառավարիչն է և այլն: Մինչ օրս էլ այդ թերթերը իրանց հաղորդած «լուրերը» չեն հերքել:

**ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ** Թիֆլիսի հալոց ծխական ուսումնարանների համար նշանակւած է Մեսրոպը քահանայ Մեկեան, որ առաջ երևանի թեմի վերատեսուչն էր:

**ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ**՝ Կալսերական Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութիւնը վճռել է իւր „Труды Кавказскаго

Общества сельского хозяйства“ ամսական հրատարակութեան տեղ՝ զիւղատնտեսական շաբաթաթերթ հրատարակել „Кавказское сельское хозяйство“ անունով, թողնելով տարեկան վճարը 4 ռուբլի՝ թերթը սկսում է հրատարակել նոյեմբերին։

«ՄՇԱԿ» Լրագիրը, վերակսւեց հրատարակել սոյն հոկտեմբերի 14-ին, խմբագրութեամբ պ. Ա. Քալանթարի և հրատարակչութեամբ տ. Մ. Մելիք-Աղամալեանի։ Խմբագրութեան չափաբարոյթեամբ ծանուցւում է որ «Մշակ»-ը կանոնաւորապէս պիտի հրատարակի նոյեմբերի 1-ից, շաբաթը երեք անգամ, նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ ինչպէս առաջ։

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ ՈՒՂԵՆՈՐՈՒԹԵԱՆ ՆԿԱՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ ամենաչն մանրամասնութիւններով պատրաստում է Մեսրոպ արեղաջ Տէր-Մովսէսեան, որ դառնում էր Էջմիածնից Երուսաղէմ ուղարկւած սրբազան պատւիրակների հետ։ Այդ աշխատութեան տպագրութեան համար, որպէս տեղեկացանք, արդէն իսկ ստացւած է 1200 ռուբլի մասնաւոր անձերից։

ԳԵՂԱՐԻՆՍՏԵՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԳԷՍ ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Ներկայ հոկտեմբերի 30-ին բացւեց Թիֆլիսում գեղարվեստների ցուցահանդէսը զինւորական-պատմական մուշէլի դահլիճներում։ Իսկ թուրք գեղարվեստական ցուցահանդէսն է Թիֆլիսում իրանց Նկարներով մասնակցում են հանդէսին՝ Բաշինջաղեան, Գաբաւե, Զախարով, Զանկովսկի, Կէպպէն, Լուկին, Խոզորովիչ, Պոդոբելովա, Ստախովսկի, Սոկոլովսկի, Շամշինեան, Փիրադեան և ուրիշներ։

ՆՈՐ-ՆԱԽԻՋՆԵԱՆԻ քաղաքային խորհրդարանը վճռել է խնդրամատուց լինել ալդ քաղաքում քաղաքի նպատակով գիմնազ բացանելու, աւելցնելով որ հաւոց լեզուն և հաւոց կրօնը պարտադիր առարկաներ լինեն հաշ աշակերտների համար։

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ հոկտեմբեր ամսին տեղի ունեցան Երեւանում և Բազում։ Երեւանում չաղթանակը տարան հին (Գեղամեանի) վարչութեան հակառակորդները. սակայն ալդ ընտրութիւնները բեկւեցին նահանգապետի կողմից՝ եղած անկանոնութիւնների պատճառով։ Նոր ընտրութիւններին չոյս ունենք որ ընդդիմադիր կուսակցութեան չաղթութիւնը ավելի ևս փառաւոր կը լինի։

Բաքում քաղաքային ընտրութիւնները կալցացան հոկտ. 2-ին, 3-ին և 16-ին, Ընտրւած են 62 հոգի, որոնցից 31 հաշ 21 թուրք, 9 ռուս, 1 լեհացի։

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ կանոնադրութեան ծրագիրը, որ մշակել է անցեալ 1892 թականին ընտրւած լանձնաժողովը, տրւած է տպագրութեան՝ հասարակութեան մէջ ցրելու համար։ Այդ

ծրագիրը քննելու, վաւերացնելու ու կառավարութեանը ներկայացնելու խնդրի համար երկրորդ նախապատրաստական ժողովը մտադրութիւն կալ գումարել՝ տպած ծրագիրը ցրելուց մի կամ երկու շաբաթ լիտով, հաւանօրէն նոյնները ամսին:

ՆԱԻԹԻ ՆՈՐ ՇՐՋԱՆ. Գրողնօրում (Հիւսիսային Կովկաս, Թերեքի նահանգ) պ. Հախուրդեանի կապալով վերցրած տեղում, 60 սաժէն խորութիւնից նաւթի ֆոնտան է խփել 8 սաժէն բարձրութեամբ, տալով օրական մինչ 300,000 պուդ. Այդ իրողութիւնով վճարում է Գրողնօր ասպագան:

ՂԱԼԱԳԵԻ ԱՂԷՏԻՑ Ֆեառաւորների օգտին հանգանակութիւններ են ակաւել ամենից առաջ Բագու, ապա այլ տեղերում:

Գ. Վ. ԳՐԻԳՈՐՈՎԻԺ.— 31-ն հոկտեմբերի մեծ շքով տօնաց ռուս լաւտնի գրող և հասարակական գործիչ Գ. Վ. Գրիգորովիչի 50-ամեակ գրական գործունէութեան չորեքանիւր. Գրիգորովիչը ռուսաց ամենաառաջնակարգ գրողներից է, բայց մեծ նշանակութիւն ունեցաւ ռուսաց մտաւոր շարժման մէջ 40 տկան և 50-ական թականներին. Գրիգորովիչը իբր գրող („Антонъ Горомына“, „Деревян“ և այլ պատմածքներով) և իբր գործիչ մեծ վաստակ ունեցաւ գիւղացիների ճորտութիւնից ազատելու համար, արթնացնելով ռուս հասարակութեան մէջ հետաքրքրութիւն հասարակ ժողովուրդի և ճորտերի տիտեր վիճակի համար:

100-ԱՄՆԱՑ ՅՈՒՆԵԼԱՆ 1794—1894. Վիեննայի Հանդէս Ամսօրեակ ամսաթերթը ձեռնարկել է հրատարակելու այդ չորեքանիւր համապատասխան լուսանկար մի պատկեր:

† ՇԱՐԼ ԳՈՒՆՕ.— Հոկտեմբերի 8-ին (հին տօր) վախճանեց Ֆրանսիացի երեւելի կոմպոզիտոր Շարլ Գունօ, հեղինակը «Ֆաուստ» օպերայի. Գունօն համարուում էր նշանաւորագոյն ներկայացուցիչը երաժշտութեան Ֆրանսիայում:

† ՉԱՅԿՈՎՍԿԻՑ, Պետր Իլիչ. Հոկտեմբերի 25-ին վախճանեց ռուսաց ներկայիս ամենանշանաւոր երաժշտական հեղինակը, որի բարձր արժանաւորութիւնը ոչ միայն Ռուսաստանում այլ և արեւմտեան Եւրոպայում ճանաչւած էր: Մեծած էր 1839 թւին, կրթւեց «Իրաւագիտութեան դպրոցում», ուր աւարտելուց լիտով մտաւ Պետերբուրգի կոնսերւատորիան, եղաւ Ռուբենշտէյնի աշակերտ, ուսեց նաև Իտալիայում և Շէէջարիայում և ապա նշանակեց պրոֆեսոր Մոսկուայի կոնսերւատորիայում: Իւր գործունէութիւնը սկսեց սիմֆոնիական պիեսներով, 1874 ին գրեց իւր առաջին օպերան Օպրիչնիէ, առանց ոսկալն սպասւած չաջողութեան. աւելի լաջողւեցին նորա լաջորդ օպերաները:

„Кузнецъ Вакула“, „Дѣва Орлеанская“ և „Мазепа“, Բայց զլուսն գործը Չակովսկու՝ 1881 թվականին գրած „Евгеній Онегинъ“ օպերան է։ Դորանից լետու նա գրեց „Пиковая дама“ և „Юланта“ ոչ շատ չափերի օպերաները, մի քանի բալետներ և ալլն։ Հանդուցեալի երաժշտութիւնը խորին կերպով արտաբերում է սլաւոնական տեմպերամենտը։

† Ա. ՊԼԵՇԶԻԵՒԻ, ռուս չափերի բանաստեղծը, վախճանեց։

ԲԱՃԱՆՈՐԴՆԵՐԻՆ. Խնդրում ենք, որ ավաւիկներ կան մնացած աշխատան շուտով հասցնել խմբագրութեան։

«ՓՈՒՆՁ» Լրագրից (հրատարակում է Կ. Պոլսում, տէր և տնօրէն Հ. Ս. Ալաճաճեան) պատահմամբ մեր ձեռքն ընկած մի համարում, առ 25 սեպտ. 1893, կարդում ենք հետեւեալ հոսոսութիւնը. — «Կէլէմէլիկի զաւառակի Պէնկլի հալարնակ զիւղէ ամսոյս 17 թւով առ մեզ ուղղեալ նամակէ մը կ'իմանանք թէ՛ տեղւոյն ուսեալ և մեծարող երկտասարդներէն Յ. Հֆէնտի Պ. (Փունջումի հարկէ աղբ և անուշը լիովին են տպւած) նախորդ ամսոյս 30-ին ամուսնացեր է վաժարանին չրջանաւարտ աշակերտուհիներէն բարեկիրթ օրիորդի մը հետ։ Խնդութեամբ կը շնորհաւորեմք, և ամենալն բարիք կը մաղթեմք նորապսակ ամուլից համար»։

Աւելցնենք որ աղ «լուրը» տպւած է «Ազգային լուրերի» մէջ...

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ», սեպտեմբեր, 1893, Ճ 9-ի մէջ։

Պ. Ղարաջեանի լողածում, էջ 1357 տող 30 տպւած է «Ինչպէս վարկնութեան չրջանի համար միամուսնութիւն...»։ Ուղիղն է՝ «Ինչպէս վարկնութեան չրջանի համար խմբական ամուսնութիւնը և քաղաքակրթութեան չրջանի համար միամուսնութիւնը (մի ամուսին ունենալը)»։ Էջ 1358 տող 16 տպւած է՝ «Մարդու բնաւորութեան ուժը»։ Ուղիղն է «Մարդու բնաւորական ուժը»։

Պ. Ս Բալազեանի լողածում, էջ 1373, տող 11 ներքեւից, տպւած է՝ «աւելի բարձր պակաս են ունենում»։ Ուղիղն է՝ «աւելի բարձր պակաս են ունենում»։

«Ձանաղան լուրերում» էջ 1458-1459, Արսէն Դիմաքսեանի մասին «Հարկնիքից» առաջ բերած տողերի մէջ սպրդել են մի քանի սխալներ, որ ուղղում ենք նախադասութիւնները առաջ բերելով Մի տեղ պէտք է կարդալ՝

«Կեանքի գերազույն սփոփանքը պարտականութեան կատարումին մէջ կը կալանալ»։

Աւելի ներքե՛

«Ձգւանքն ալ հզօր միջոց մըն է ժողովուրդ մը բարո-  
ւականացնելու: Աւելի գրքին մէջ կեղծոտ իրա-  
կանութեան մը բոլոր մերկութեամբը նկարագրւած Բա-  
րաթեանները...» և այլն:

### ՆՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱՅ ԳՐԲԵՐ

- 1) DAGHBASCHIAN, H., d-r phil.—Grünaug des Bagraditenreichs.  
durch Aschot Bagratuni. Berlin, Mayer und Müller, 1893.  
(Իշաբաշեան, Յ., զոքտոր ֆիլոսոֆալութեան.—Բագրատուն-  
նեաց հարստութեան հիմնադրութիւնը Աշոտ Բագրատունու  
ձեռքով, Բերլին, Մալէր և Միւլլէր, 1893. գինն է ?
- 2) ՍՈՒՆԴՈՒԿԱՆՑ, Գաբրիէլ.—«Ամուսիններ», կոմեդիա հինգ արարւա-  
ծով.—Թիֆլիս, տպ. Յովհ. Մարտիրոսեանցի, 1893, գինն է ?
- 3) ? —Ֆրանս-Պրուսական պատերազմը: Դրօշակակիրը: Կոմարի դա-  
տաւորի տեսիլքը: Վիկտոր Հիւգոն և Խաւրիան, Մոսկա, տպ.  
Ք. Բարխուդարեանի, 1893, գինն է 5 կոպ.
- 4) ? —«Այն ընդ ականո», Թարգմ. ռսերէնից Մ. Տէրեան.—Մոսկա,  
տպ. Ք. Բարխուդարեանի, 1893, գինն է 1 կոպ.
- 5) ? —«Պառաւ Տոնկա», Թարգմ. ռսերէնից Ն. Բաբաքեիսլեան.—Մոս-  
կա, տպ. Ք. Բարխուդարեանի. 1893, գինն է 3 կոպ.
- 6) ԱՇԸԳ. ԶԻՒԱՆՈՒ ԵՐԳԵՐԸ, Երրորդ տպագրութիւն. հաւաքածու հեղի-  
նակի տպւած և անտիպ երգերից: Հրատ. «Շիրակ» գրաւաճա-  
ռանոցի: Ալէքսանդրապօլ. տպ. Գ. Սանդեանի, 1893, գինն  
է 1 ռ. 20 կոպ.
- 7) ԶՈՒԴԵՐՄԱՆ, Գ.—Պատիւ, կոմեդիա չորս գործողութեամբ, Թարգմ.  
Յ. Ղարաբեկեանցի, Թիֆլիս, տպ. Ա. Մելիք Շահնազարեան-  
ցի, 1893 թ., գինն է 50 կոպէկ:
- 8) ՊԱՏԿԱՆՆԱՆ Ռաֆայէլի Ընտիր երկասիրութիւնները երկու հատորով,  
խմբագրութեամբ Գր. Խալաթեանի և հրատարակութեամբ տի-  
կին Վառվառէ Քանանեանի, Հեղինակի 2 պատկերով, ինքնա-  
գրով, կենսագրական նկարագրով և նոր-նախնայեանց լեզուի  
համառօտ բառգրքով, Հատոր I—Ոտանաւորներ, Հատոր II—  
Արձակ գրածքներ, Պետերբուրգ, 1893 թ., տպարան Լիբեր-  
մանի, Գինն է երկու հատորի 4 ռուբլի, Մախուտ է չո-  
ղոտ հանգուցեալ հեղինակի ընտանիքի:

Խմբագիր՝ ԱԻԵՏԻՔ ԱՐԱՍԻՍԱՆԵԱՆՑ

Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՋԱՐԵԱՆՑ